



ԼՐԱՏՈՒ

ՀԱՅ ԱԻԵՏ. ԳՈԼԷՃԻ

ԺԱ. ՏԱՐԻ ԹԻԻ 2

30 Մարտի, 2010

ԾՆՈՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆԸ ՊԱՏՈՒԱՄԻՐԵՅ ԿՐԹԱԿԱՆ ՄՇԱԿՆԵՐԸ «ՈՒՍՈՒՑՉԱՅ ՕՐ»ՈՒՄՆ ԱՌԻԹՈՎ



Հ.Ա.Գ.ի Ծնողական Մարմինը դպրոցի կրթական մշակները՝ «Ուսուցիչներու Օր»ուան առիթով պատեց հիւրասիրութեամբ մը, որ տեղի ունեցաւ Երկուշաբթի, 8 Մարտին, կ.ա. 10.00-11.00-ի միջեւ: Ծնողական Մարմինի ատենապետուհի Տիկ. Մարալ Հայտարարեց հայերէնով եւ անգամուհի Տիկ. Սիլվա Լեւի-

ճեան արաբերէնով օրուան պատշաճ խօսքեր արտասանեցին, ապա՝ Ծնողական Մարմինը դպրոցի ուսուցչարանին փոքր սառնարան մը եւ Պրն. Տևօրէնին



նուէր մը մատուցին: Պրն. Տևօրէնը, յանուն ուսուցչական կազմին շնորհակալական խօսքով հանդէս եկաւ: Պահը միաժամանակ եղաւ ընկերային հանդիպումի հաճելի առիթ:

ՇՐՋԱՆԱԿԱՐՏ ՅՈՎԻԿ ԲԻՐՔՃԵԱՆԻ ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ Ի ՅԻՇԱՏԱԿ ԻՐ ԾՆՈՂԱՅ

22 Յունուարի, 2010-ին, 1965-ի շրջանաւարտ Տիար Յովակիմ Բիրքճեան, տնօրէնութեան գրասենեակ այցելեց իր քրոջ ընկերակցութեամբ դպրոցի շէնքը շրջեցաւ եւ տեսաւ իր անունը կրող Science Room-ը: Ապա՝ Պրն. Տևօրէնին յայտնեց թէ ի յիշատակ իր ծնողաց, հօր՝ Գեորգ Բիրքճեանի, (1921-1970) եւ մօր՝ Վարսենիկ Բիրքճեանի (1922-2009) դպրոցին կը նուիրէ 27.000 ամերիկեան տոլար: Դպրոցի հոգաբարձութիւնն ու տնօրէնութիւնը երախտագիտութեամբ ընդունեցին առատաձեռն նուիրատուութիւնը, եւ որոշեցին Մանկապարտեզի բաժնի մէջ յիշատակի տախտակ մը գտնուել այդ առնչութեամբ: 5 Մարտին դպրոց այցելեց բարերարին տիկինը՝ 1966-ի շրջանաւարտ Տիկ. Մարալ Բիրքճեան (ծնեալ Ենիգոմշեան): Ընորհակալութիւն այս օրինակելի ժեստին համար:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ



Կիրակի, 14 Մարտի, 2010, Երեկոյեան ժամը 6.00-ին, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ վաստակաշատ կրթական մշակներու մեծարանքի հանդիսութիւն եւ շքադրում, կազմակերպութեամբ Լիբանանի Հայ Աւետ. Կրթական Խորհուրդին: Օրուան պատգամաբերն էր Վեր. Դոկտ. Փօլ Հայտարարեց: Գործադրուեցաւ գեղարուեստական յայտագիր:

ՃԱՇԿԵՐՈՅԹ

Բարձր Հովանաւորութեամբ

Ն. Վ. ՎԱՐՉԱՊԵՏ ՍԱՍՏ ՀԱՐԻՐԻԻ

Ֆենիսիա պանդոկի շքեղ սրահին մէջ

Շաբաթ, 22 Մայիսի, 2010, Երեկոյեան ժամը 9.00-էն սկսեալ

ՄՈՒՏՔԸ ՏՈՄՍՈՎ

Տոմսերը կարելի է գնել դպրոցի հաշուակալութենէն

(Շար.ը էջ 4)

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

- 15 Դեկտեմբերի, 2009-ին Մանկապարտեզի աշակերտները մանկ



կապարտիզպանուհիին առաջնորդությամբ այցելեցին Տպայէի ABC-ն:

- Նախակրթարան Ա-2. դասարանի, 23 Դեկտեմբերին, եւ Է-Թ. դասարանի աշակերտները, 22 Դեկտեմբերին, առաջնորդությամբ իրենց արաբերենի ուսուցիչներուն այցելեցին Պիէլի արաբերեն գիրքերու ցուցահանդես-վաճառքին:

- Նախ.ի Ա.-Միջնակարգ Ը. դասարանի աշակերտները, 25 Փետրուարին, Յ. Պողոսեան թատերա-

սրահին մէջ ներկայ եղան Փ. եւ Է. Թորոսեան Միջնակարգ Վարժարանի թատերախումբի «Ոսկի Ձկնիկ» երաժշտական թատերախաղին (բեմադրիչ՝ Ռոպերթ Առաքելեան):

- Մանկապարտեզի եւ Նախ. Ա-2. դասարանի աշակերտները Արեւո Փալաս թատերասրահին մէջ, 2 Մարտի, 2010-ին, ներկայ եղան արաբական երաժշտախառն ներկայացման մը՝ «Յէյբ Ըլ-Վայթան Ահլի»:

- Ընդառաջելով Սբ. Նշան Մայր եկեղեցւոյ թաղականութեան հրաւերին, ԺԱ. դասարանի աշակերտները, ընկերակցութեամբ իրենց դաստիարակին եւ Պրն. Տնօրէնին, 10 Մարտին ներկայ եղան Միջինքի Արեւագալի արարողութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսի քարոզին:

- 19 Մարտի, 2010-ին, Է-ԺԲ. դա-

սարաններու աշակերտները, առաջնորդությամբ Պրն. Տնօրէնին եւ իրենց դաստիարակներուն, ներկայ եղան Առաջնորդարանի կազմակերպութեամբ Միսաք Քելեշեանի ցուցադրած «Որբերու Աղերսը» վաւերագրական ֆիլմին, Էմիլ Լահուտ կեդրոնին մէջ, Տպայէ:

- Մանկապարտեզի եւ Նախակրթարանի Ա-2-ի աշակերտները, 22 Մարտի, 2010-ին, իրենց ուսուցիչներու ընկերակցութեամբ այցելեցին Ֆանթազիա հաստատութիւնը, Շուէյֆաթի մէջ:

- Նախակրթարան Դ-ի աշակերտները, ընդառաջելով Լ.Օ.Խ. «Մանուկներու Օր»ուան յատուկ «Մենք Ալ Իրաւունք Ունինք» երգախառն ներկայացումին, 26 Մարտի, 2010-ին Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ:

- Մանկապարտեզի աշակերտները 21 Յունուարին «Քիքի Մանքի» խաղավայրը եւ 23 Փետրուարին՝ McDonald այցելեցին:

ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ Զ.Ա.Գ.-ԷՆ

- Հայաստանի Սփիւռքի նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեան 26 Մարտի, 2010-ին, Զ.Ա.Գ.-ի Տնօրէնութեան գրասենեակը այցելեց ընկերակցութեամբ Հայաստանի դեսպան Աշոտ Քոչարեանին, հիւպատոսին եւ Ա. քարտուղարին: Յարգելի հիւրը շրջեցաւ դպրոցի շէնքի այլազան վայրեր գրադարան, գիտաշխանոց, 3 դասարաններ եւ Մանկապարտեզ

- Աստուածաշունչի Ակումբի «Չուարթոնգ» պարբերաթերթը, որ դադրած էր երկար տարիներէ ի վեր, հոգեւոր տեսուչին ջանքերով վերահրատարակուեցաւ: Նոր շրջանի Ա. թիւը լոյս տեսաւ 11 Դեկտեմբերի, 2009-ին:

- 15 Դեկտեմբերին, A.M.A.A. Դաշտի Գործիչ Պրն. Տիգրան Եւմուշագեան, ընկերակցութեամբ Պատ. Սեպուհ Թերզեանի դպրոց այցելեց, նաեւ շրջեցաւ դասարանները եւ դպրոցի շէնքի այլ բաժինները:

- «Պատիկ-Մատիկ»ի «Անսխալ Գրենք»ի մրցումին Նախ. 2.Էն Մէյրի Պալի պատուոյ յիշատակութեան արժանացած է:

- Համալսարանական կողմնորոշման գծով ԺԱ. դասարանը եւ ԺԲ.Էն երկրորդ անգամ ըլլալով այցելել փափաքող աշակերտներ իրենց դաստիարակին առաջնորդութեամբ 23 Յունուարին ներկայ եղան «Պիէլ»ի մէջ կազմակերպուած համալսարանական fair-ին:

- Ամանորի բարեսիրական հանգանակութենէն այս տարի գոյացաւ 1.156.750 լ.ո., իսկ Մարտ 1-5-ի «Հայ Գիրքի Շաբաթ»ի նուիրահաւաքէն՝ 84 գիրքեր եւ 668.000 լ.ո.:

- 2009-2010 տարեշրջանի երկրորդ Ծնողք-Ուսուցիչներ հանդիպումը տեղի ունեցաւ 4 Մարտի, 2010-ին: Տեսակցութեանց աւարտին Պրն. Տնօրէնը ծնողաց խօսեցաւ մանկավարժական հարցերու մասին:

- Պատմութեան Ակումբի անդամները 27 Փետրուարի, 2010-ին, դպրոցի լսատեսողական սենեակին մէջ դիտեցին Ben Hur պատմական ժապաւենը:

Զ.Ա.Գ.-Ը ՀԱՄԱՑԱՆՑԻ ՎՐԱՅ

Նախապէս տեղեկացուցած էինք թէ համացանցի վրայ կարելի է դիտել Զ.Ա.Գ.-ի անցեալի ու ներկայի նկարներ, գրութիւններ եւ տեսնել «ԼՐԱՏՈՒ»ի պատճենը, հասցեն՝

www.aecalumnibeirut.com

Այս շնորհակալ գործը կատարողներն են գանատաբնակ շրջանաւարտներ՝ Վարդգէս Նիկոլեան եւ Վարդան Թօնպագեան:

ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱՒԱՐՏՆԵՐԷ

- Ազգային բարերար Տիար Վաչէ Մանուկեան եւ իր տիկինը Յ.Ա.Գ.-ի 1978-ի շրջանաւարտուի



Տիկ. Թամար Մանուկեան (ծնեալ Գարայեան) բարերարները հանդիսացած են Յ.Բ.Ը.Մ.-ի Փաստենայի Երկրորդական վարժարանին եւ կեդրոնին, 11 միլիոն տոլարի իշխանավայել նուիրատուութեամբ: Դպրոցը վերանուանուած է բարերարներուն անունով:

- 1968-ի շրջանաւարտ Դոկտ. Վահան Չանոյեան հաստատուած Փոլ (Չուիցերիա), անուանի տընտեսագետ է, անոր դիմանկարը դրուած է Ելեւմտական աշխարհի մէջ առաջնակարգ World Finance ծաւալուն պարբերաթերթի Յունուար-Փետրուար 2010-ի կողքին վրայ: Ան 11 Մարտին, ինչպէս բազմաթիւ անգամներ անկէ առաջ, երեւցաւ CNN-ի պաստառին վրայ, երբ իր կարծիքը կը հարցուէր Միջին Արեւելքի քարիւղի հարցերու:



- 1953-ի շրջանաւարտուի Տիկ. Ժանէթ Քասունի 52 երկար տարիներու ուսուցչական ծառայութենէ մը ետք, ինքզինք հանգստեան կոչած է Յունիս 2009-ին: Լոս Անճելոսի Յայ Աւետ. Մերտինեան դպրոցի հոգաբարձութիւնը զինք ամավերջի հանդեսին պարգեւատրած է

յուշատախտակով մը: Տիկ. Քասունի Յ.Ա.Գ.-էն ներս նուիրեալ վաստակաւոր ուսուցչուհի եղած է 1957-էն մինչեւ Ամերիկա գաղթելը՝ 1987-ին:

- 1964-ի շրջանաւարտ Տիկ. Թամար Տէր Յովհաննեսեան յաւերժացնելու համար իր եղբոր՝ 1970-ի շրջանաւարտ Արմէն Թովճեանի (1950-1980) յիշատակը, անոր ստեղծագործած երգիծանկարները ամփոփած է Caricatures ա-



նուն գիրքի մը մէջ: Գործերը նաեւ ցուցադրուեցան Յայկազեան Յամալսարանի Արթիւր Մաթոսեան ցուցարահին մէջ (Մուկար շէք) 25 Փետրուարէն սկսեալ քանի մը օր:

- 1954-ի շրջանաւարտ, լոնտոնաբնակ հաջիկ Փիլիկեան Աթէնք հրաւիրուած է «Յայաստան» Յայ Մշակութային Կեդրոնին կողմէ, Կոմիտասի 140-ամեակին նուիրուած ձեռնարկի մը՝ 14 Նոյեմբերի, 2009-ին: Ան եղած է գլխաւոր բաւնախօսը, եւ իր խօսքէն ետք, հանդես եկած է կոմիտասեան ինչպէս եւ ժողովրդական ու դասական երգերու հիանալի կատարումներով:

- 1973-ի շրջանաւարտ բարիզաբնակ Յովել Շնորհօքեան Յունուար 2010-ի սկիզբին Յայաստանի Յեռուստատետութեան Յ1 կայանէն, «Ծագումով Յայեր» յայտագրի



հիւրն եր: Ան խօսեցաւ իր գերդաստանին, ընտանիքին եւ գործին մասին:

- 1996-ի շրջանաւարտ եւ Գանատայի Մըքլիլ երաժշտանոցի դասախօս Օրդ. Անի Զերոբեան, նոյն երաժշտանոցին մէջ, 15 Դեկտեմբերի երեկոյեան ժամը 7.00-ին, դաշնամուրի նուագահանդես մը տուած է: Օրդ. Զերոբեան Աննօ Բաբաջանեանի «Յերոսական Բալլադը» առաջին անգամ ըլլալով հնչեցուցած է Մոնթրէալի մէջ:

- 1954-ի շրջանաւարտ Պետրոս Ալահայտոյեան հրատարակած է «Բալուի եւ Տարածաշրջանի Երաժշտական Ազգագրական Յաւաքածոյ» հատորը (456 մեծադիր էջ), զոր 13 տարիէ ի վեր կ'աշխատասիրէր նիւթը, համակարգիչի վրայ առանձին շարելով: Գիրքը ունի գունաւոր լուսանկարներ, ձայնագրուած էջեր եւ երգերու խտասալիկ: Տպուած է Երեւան:

- Յ.Ա.Գ.-ի նախկին աշակերտներ Փոլ Եագուպեան եւ Նազարէթ Ճերեճեան 13 Դեկտեմբերի, 2009-ին յաջորդաբար ատենապետ եւ փոխ ատենապետ ընտրուած են Յաճնոյ Յայրենակցական Միութեան, իսկ 1992-ի շրջանաւարտուի Օրդ. Յուրի Զեստենեան՝ հաշուապահ:

- 1 Նոյեմբերի, 2009-ին, Ազունիէի Ազգ. բուժարան այցելեց Յ.Ա.Գ.-ի 1971-ի շրջանաւարտ Վահէ Պալիոգեան, որ Նիւ Եորքի Armenian Medical Fund Inco-ի ատենապետն է: Այս մարմինը բուժարանը օժտած է ջեռուցումով, տաք ջուր հայթայթող կազմածներով եւ քէ-ճառագայթի բաժինով:

- 1984-ի շրջանաւարտ Փրոֆ. Սեպուհ Այնթապեան, 28 Փետրուարի, 2010-ին, Այնճարէն՝ Լիբանանի թեմի Ազգային Երեսփոխանական (գաւառական) ժողովի անդամ ընտրուած է:

- 1974-ի շրջանաւարտուի Տըքթ. Սոնա Տեմիրճեան, Լիբանանի Յայ Ատամնաբոյժներու Միութեան վարչական ընտրուած է 24 Փետրուարի, 2010-ին: (Շար.ը էջ 4)

ԲԱՆՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ

- 1987-ի շրջանաւարտուիի Տիկ. Սինթա Թովմասեան եւ ամուսինը՝ Վահէ, 6 Նոյեմբերի, 2009-ին, բախտաւորուած են մանչ զաւակով մը՝ Պերճ-Քրիս, Սիտնիի մէջ:

- Բ.Ա.Գ.-ի մնայուն ուսուցչուիի Տիկ. Նուարդ Ղորղորեան եւ իր ամուսինը, 4 Փետրուարի, 2010-ին, բախտաւորուած են առջիննէլ դուստրով մը՝ Սիրա:

ՄԱՀ

- 1952-ի շրջանաւարտ երկրագիտական Վահէ Տէր Խորէնեան (1934-2010) մահացաւ Պէյրութի մէջ, 29 Յունուարի, 2010-ին:

- Բ.Ա.Գ.-ի 1948-53 եւ 1959-62 տարիներու նախկին ուսուցչուիի Տիկ. Չապէլ Մանտոյեան (1919-2010) մահացաւ Պէյրութի մէջ, 14 Փետրուարի, 2010-ին:

Շարունակուած Ա. Էջէն

Մ.Ա.Բ.Ա.Ե. Միութեան նախագահ Վեր. Մ. Գարակեօզեանի խօսքէն ետք, իր եւ կրթական խորհուրդի ատենապետուիի Դոկտ. Արտա Էքմէքճիի ձեռքով իրենց շքանշանները ստացան Լիբանանի Հայ Աւետ. վարժարաններու մէջ պաշտօնավարող 20 ուսուցիչներ, որոնք առնուազն 25 տարիներ կրթական ծառայութիւն ունին, որոնց գէթ 15 տարիները Հայ Աւետ. վարժարանէ մը ներս:

Շքադրուողներուն մէջ էին Բ.Ա.Գ.-ի ուսուցիչներ Տիկ. Անի Խոշաֆեան-Եունիսէս (յետ մահու), որ 1983-2008, մինչեւ անակնկալ մահը Բ.Ա.Գ.-ի մէջ ծառայած էր, եւ Բ.Ա.Գ.-ի 1996-Էն ի վեր գծագրութեան եւ ձեռարուեստի այցելու ուսուցիչ Տիար Վազգէն Մուղալեան, (որ 1974-Էն սկսեալ ուսուցչական ասպարեզին մէջ է եւ 1993-Էն սկսեալ Հայ Աւետ. վարժարաններու մէջ կը պաշտօնավարէ):

Անոնք այսպէսով կը միանան Բ.Ա.Գ.-ի մէջ ներկայի պաշտօնավարող եւ նախապէս շքադրուած Դոկտ. Չ. Մարրլեանի, Տիար Վ. Բիւզանդանի, Օր. Մ. Ունճեանի եւ Պր. Մ. Թասիի:

Շարունակուած Էջ 3-էն

- 21 Մարտի 2010-ին 1973-ի շրջանաւարտ Անտրէ (Անդրեաս) Ռուպեանի Սետըլ Ռիվըրի (Նիւ Ճըրզի, ԱՄՆ) բնակարանին մէջ կազմակերպուեցաւ յատուկ ընդունելութիւն մը՝ ի պատիւ ամերիկացի հայասեր ծերակուտական

Ռապըթ Մեննետեզի:

- 1998-ի շրջանաւարտ Կարօ Աւետեան խմբավարեց Հայ Աւետ. «Արմիս» երգչախումբի «Գարնանային Համերգ»ը, Հայ Աւետ. Ա. Եկեղեցիին մէջ, 28 Մարտի, 2010-ին:

ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

«Լրատու»ի նախորդ թիւի հրատարակութենէն ասդին հետեւեալ նուիրատուութիւնները՝ ի նպաստ դպրոցին, շնորհակալութեամբ ստացուած են.

«Ծիածան» Մանկամտուրի յատկացում 7.500.000 լ.ն., 1951-ի շրջանաւարտ մը (Պէյրութ) իր տարեկան յատկացումը 5000 տոլար, Տիար Գեորգ Արապեան 5000 տոլար Հոկտեմբերի 2009-Էն Փետրուար 2010-ի յատկացում, Տէր եւ Տիկ. Հրայր Սարգիսեան (Լիբանան) 2000 տոլար, շրջանաւարտուիի Տիկ. Անահիտ Ժամկոչեան (Սէուտ. Արաբիա) Մանկապարտեզին 100 տոլար, Տէր եւ Տիկ. Պերճ եւ Սոնիա Գալայճեան (Մոնազօ) 2500 տոլար, Օր. Սոնա Նաշեան «ՍԻՓԱՆ»-ի առ ի գնահատանք՝ 50.000 լ.ն., «ԼՐԱՏՈՒ»-ի առ ի գնահատանք՝ Օր. Գայանէ Գուզուճեան (Քաթար) 200 տոլար, շրջանաւարտ Սարգիս Եագուպեան (Գանատա) 1000 տոլար, «ԼՐԱՏՈՒ»-ի առ ի գնահատանք, շրջանաւարտ Յարութ Միսիրեան 50 տոլար, Տիկ. Ժանէթ Քասունի 20 տոլար «ՍԻՓԱՆ»ի առ ի գնահատանք, շրջանաւարտ Տիկ. Վիլմա Հերմէզ (Քուէյթ) 1000 տոլար, «ԼՐԱՏՈՒ»-ի առ ի գնահատանք՝ նախկին ուսուցչուիի Տիկ. Սոնա Եափուճեան 100.000 լ.ն., շրջանաւարտուիի Տիկ. Թամար Տէր Յովհաննէսեան (Ապու Տապի) 500 տոլար, Տէր եւ Տիկ. Երջան եւ Սօսի Կիրակոսեան (Աստարլիա) 100 Աստարլիական տոլար, շրջանաւարտուիի Այտա Պաղչէճեան (Գանատա) 934 տոլար, հօրը՝ Տոքթ. Կարօ Պաղչէճեանի մահուան 40-րդ տարելիցին առիթով, Տիկ. Յասմիկ Հալէպլեան (Լոս Անճելոս) առ ի գնահատանք «ՍԻՓԱՆ»-ի 83 տոլար:

Դպրոցի «Արա Պալեան Կրթական Ֆոնտ»ին հետեւեալ նուիրատուութիւնները եղան հանգուցեալ Արա Պալեանի յիշատակին. Տիկ. Սօսի Պալեան 400.000 լ.ն., Տիար Արմէն Պալեան 150.000 լ.ն., Տոքթ. Արման եւ Դոկտ. Արաքս Պալեան-Գրիգորեան (ԱՄՆ) 150.000 լ.ն., Տէր եւ Տիկ. Ալէք Պալեան (ԱՄՆ) 100.000 լ.ն., օրհորդներ՝ Արշակուիի եւ Լուսին Տէր Խաչատուրեան 100.000 լ.ն., Տէր եւ Տիկ. Չարեհ Տէր Խաչատուրեան 75.000 լ.ն., Տէր եւ Տիկ. Տարօն Տէր Խաչատուրեան (Հռոմ) 75.000 լ.ն., Տէր եւ Տիկ. Րաֆֆի եւ Շադիկ Մետրոպեան 75.000 լ.ն.:

Խմբագիր՝ Տնօրէն Չաւէն Մ. Մարրլեան

Խորհրդատուներ՝ Տեարք Ներսէս Պաղտոյեան եւ Յակոբ Տեմիրճեան

Էջադրում՝ քարտուղարուիի Շողեր Աղպաշեան-Ֆայսալ

Y.M. Philibossian Armenian Evangelical College P.O.Box 3672- Beirut, Tel: 01-349816 - Fax 01-751469

E-mail: A_E_C@cyberia.net.lb